

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿՐԱ ԱԶԴՈՂ ՄԻ ՔԱՆԻ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԵՌՈՐԶ՝ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ*

Արամ Մանուկյան

Պետությունները միջազգային կյանքի գլխավոր դերակատարներն են, ուստի նրանց հարաբերություններից են կախված ժամանակակից միջազգային անվտանգության մակարդակը և համաշխարհային զարգացումները: Միջպետական բարդ ու բազմաբնույթ հարաբերությունների ուսումնասիրության խնդիրներից մեկը՝ դրանց վրա ազդող միջազգային հիմնական գործոնների վերհանումն է: Ինչպես հայտնի է, ազգային պետությունների ձևավորմանը զուգընթաց առաջնային նշանակություն է սկսում ձեռք բերել առանձին պետությունների ազգային անվտանգության ապահովման հարցը, որը նախնական շրջանում դրսևորվում էր պետությունների երկկողմանի և բազմակողմանի հարաբերություններում, իսկ հետագայում առաջանում է միջազգային անվտանգության կարևորագույն մասը կազմող տարածաշրջանային անվտանգության համակարգը, որի ձևավորման հիմքը մեկ տարածաշրջանում տարբեր երկրների համատեղ գործունեության պատմականորեն ձևավորված միասնական դաշտի գոյությունն է: Այս պարագայում դիտարկվում է տարածաշրջանը, որն ունի պատմականորեն ձևավորված տնտեսական, էթնիկական, լեզվական ու մշակութային, ռազմական ու քաղաքական կապեր: Օրինակ՝ Ֆրանսիան որպես տարածաշրջանային տերություն՝ տարածաշրջանային միության մեջ է ներգրավել Եվրոպայի ֆրանսախոս երկրներին (Բելգիա, Նիդեռլանդներ, Լյուքսեմբուրգ), Անգլիան անգլախոսներին և այլն: Ձևավորվում են նաև ավելի կատարյալ տարածաշրջանային միավորումներ, ինչպես, օրինակ, Եվրամիությունը: Այդպիսի միավորումներում գործում են ընդհանուր դրամանիշը, վերազգային կառավարման մարմիններ և այլն [1]: Մեր ժամանակներում միջազգային անվտանգության համակարգի հիմնական երաշխավորը Միավորված ազգերի կազմակերպություն է, որին իրավունք է տրված իրագործելու կանխարգելիչ, խաղաղապահ գործունեություն և կիրառել հարկադրական միջոցառումներ աշխարհի բոլոր մասերում, ընդհուպ մինչև ռազմական ուժի կիրառումը[2]:

Անվտանգության համակարգերի ինտեգրացիայի տարածաշրջանային ձևերը կարող են տարբեր լինել՝ պետությունների երկկողմանի, բազմակողմանի միություններ, որոնք մշակում և իրականացնում են իրենց համար միասնական տարածաշրջանային անվտանգության համակարգ՝ ազգային, ինչպես նաև տարածաշրջանային անվտանգության ուժերի մասնակցությամբ: Այդպիսի համակարգում օգտագործվում են խաղաղար ուժերը, կազմակերպվում են սահմանների և բնական պաշարների պաշտպանությունը և այլն:

Միջպետական հարաբերությունների վրա էական ազդեցություն է գործում պետության բնույթը և ներուժը: Թեև միջազգային իրավունքը նախատեսում է պետությունների իրավահավասարություն, սակայն գործնականում միջպետական հարաբերություններում և անվտանգության համակարգերի ձևավորման գործընթացներում մեծ նշանակություն ունի պետության հզորությունը: Աշխարհի բոլոր պետություններն, առաջին հերթին, իրա-

** Հոդվածն ընդունվել է 26.01.2015:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի վարիչ, ք.գ.դ., դոցենտ՝ Ա. Ենգոյան

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

րից տարբերվում են իրենց հզորությամբ: Հզորության հիմնական չափանիշներն են երկրի տարածքի չափերը, սահմանների բնույթը, բնակչության քանակը, արժեքավոր հանքանյութերի առկայությունը կամ բացակայությունը, տեխնոլոգիական և տնտեսական զարգացման մակարդակը, ֆինանսական հզորությունը, բնակչության էթնիկական միատարրության չափը, հասարակական ինտեգրացիայի մակարդակը, քաղաքական կայունությունը, ազգային ոգին (ազգային գաղափարի առկայությունը, ազգի միակամության աստիճանը) և այլ երկրներին ռազմական հասանելիությունը:

Այդ չափանիշներով աշխարհի պետությունները բաժանվում են երեք խմբի՝

Առաջին երկրների մեջ մտնում են գերտերությունները (ներկայում՝ ԱՄՆ-ն և ինչ որ չափով Չինաստանն ու Ռուսաստանը):

Երկրորդ խումբը կազմում են տարածաշրջանային տերությունները (Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Ֆրանսիա, Իտալիա, Ճապոնիա, Հնդկաստան, Բրազիլիա, Թուրքիա, Իրան և այլն):

Երրորդ խումբը փոքր պետություններն են:

Անհրաժեշտ է հաշվի առնել այն իրողությունը, որ այս կամ այն խմբի երկրների դասին պատկանելի մշտական վիճակ չէ, և այն կարող է փոխվել հատկապես տվյալ երկրի հզորության չափանիշները կամ կոնկրետ տարածաշրջանում քաղաքական իրավիճակը փոխվելու հանգամանքներում: Միաժամանակ կարևոր է ի նկատի ունենալ, որ աշխարհի բոլոր պետությունները մասնակցում են միջազգային անվտանգությունն ապահովող համակարգի գործունեությանը, որը դրսևորվում է միջազգային կառույցներին մասնակցությամբ և այնպիսի միջազգային օրենքների ստեղծման մասնակցությամբ, որոնք հնարավորություն են ընձեռում ինչ-որ չափով ապահովելու առանձին պետությունների անվտանգությունը[3]:

Միջազգային հարաբերությունները ներառում են հասարակական կյանքի տարբեր ոլորտներ՝ քաղաքական, տնտեսական բնագավառներից սկսած մինչև մշակութային, սպորտային բնագավառները: Առավել բազմազան են նրանց մասնակիցները, որի մեջ են ընդգրկված պետությունները, ոչ պետական միավորումները և անհատները: Քաղաքական գիտության մեջ, ինչպես նաև այլ սոցիալական ուղղվածության առարկաներում մի շարք տերմիններ են ձևավորվել, որոնք ներկայացնում են նրանց կողմից ուսումնասիրվող գործող մասնակիցներին: Իր բովանդակությամբ առավել լայն կիրառում ունի «սուբյեկտ» տերմինը (գիտաբառը), որի տակ հասկանում են անհատ, խումբ, դասակարգ, մարդկային հանրություն և այլն: Միջազգային հարաբերությունների քաղաքական գիտության մեջ համագործակցող կամ հակամարտող կողմերին առավել շատ ընդունված է ներկայացնել ակտոր տերմինով: Հայերեն համարժեքն է՝ դերակատար: Իրականում ակտոր եզրը ավելի լայն ընդգրկում ունի, քան դերակատար տերմինը, քանի որ այն իր մեջ ներառում է ոչ միայն անձանց, այլև կազմակերպություններ, քաղաքական ինստիտուտներ (օրինակ՝ պետություն) և կառույցներ: Հարկ է նշել, որ միջազգային և տարածաշրջանային անվտանգության ապահովման առումով տվյալ ակտորների գործունեությունը ևս զգալի ազդեցություն է ունենում, ուստի դրանց գործունեության ուսումնասիրությունը նույնպես տվյալ խնդրի շրջանակներում առաջնահերթ նշանակություն է ձեռք բերում:

Միջազգային և տարածաշրջանային անվտանգության խնդիրներն ուսումնասիրելիս հարկ է նախ և առաջ պատկերացում կազմել, թե հատկապես որ սպառնալիքներն են ներկայումս համարվում առաջնային միջազգային հանրության համար: Ընդունված է համարել, որ միջազգային անվտանգության սպառնալիքների մեջ առաջնայինը համաշխարհային բնապահպանության ոլորտի սպառնալիքներն են: Երկրորդ սպառնալիքն իր

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

նշանակությամբ համարվում է տարածաշրջանային զինված հակամարտություն, քանի որ դրանք կարող են վերածվել նոր համաշխարհային պատերազմի: Երրորդն իր նշանակությամբ միջազգային ահաբեկչություն է: Բնականաբար, միջազգային անվտանգության տեսանկյունից այդ սպառնալիքները վերաբերում են աշխարհի բոլոր պետություններին, ուստի անհրաժեշտություն է առաջացել միավորելու բոլորի գործողությունները՝ պայքարելու այդ սպառնալիքների դեմ: Սակայն անգամ այդ պայմաններում առանձին պետությունների գործողություններում նկատվում են իրենց ազգային շահերից բխող գործողություններ, որոնք, մեղմ ասած, չեն նպաստում համաստեղ գործունեությանը: Օրինակ՝ ԱՄՆ-ը չի միանում մթնոլորտի ջերմոցային գազերի արտանետման սահմանափակման միջազգային պայմանավորվածություններին, քանի որ այն կարող է վնաս հասցնել իր տնտեսության զարգացմանը: Միևնույն ժամանակ նկատելի է, օրինակ, որ տարածաշրջանային հակամարտությունների պայմաններում երրորդ երկրները գործում են առաջին հերթին ելնելով զուտ իրենց ազգային շահերից: Կամ, պայքարելով միջազգային ահաբեկչության դեմ, ԱՄՆ-ն, Ռուսաստանը, Չինաստանը և այլ պետություններ գաղտնի օժանդակում են միջազգային տարբեր ահաբեկչական կազմակերպություններին:

Միջպետական հարաբերությունների մակարդակում սպառնալիքների ձևավորման պատճառներ կարող են հանդիսանալ տարածքային վեճերը, տարածքային տերության կամ գերտերության քաղաքական թելադրանքը, տնտեսական կամ էթնիկական էքսպանսիան: Սակայն այդ հարաբերությունների վրա ազդող միջազգային գործոններն ավելի շատ են:

Միջպետական հարաբերությունների և միջազգային անվտանգության ձևավորման գործընթացում վրա իրենց ազդեցությունն են թողնում հետևյալ հիմնական միջազգայնացված կազմակերպություններն ու հասարակական ուժերը, որոնք հանդես են գալիս որպես գլխավոր ակտորներ.

- Միջազգային կազմակերպությունները (ՄԱԿ, ԵԱՀԿ, Միջազգային տրիբունալ, Միջազգային դատարան և այլն),
- Էթնոքաղաքական միջազգային կազմակերպությունները (Հրեական միջազգային կոնգրես, Սլավոնական ժողովուրդների կոնգրես և այլն),
- Միջազգային քաղաքական կուսակցությունները (Սոցիալիստական ինտերնացիոնալ, Եվրոպայի ժողովրդական կուսակցություն և այլն),
- Ֆինանսարդյունաբերական միջազգային միությունները (արդյունաբերական-ֆինանսական տրանսնացիոնալ կորպորացիաները),
- Կլերիկալ միությունները (կաթոլիկ, ուղղափառ, բողոքական, մուսուլմանական եկեղեցիները, տարբեր տեսակի կրոնական աղանդները),
- Միջազգային քաղաքական էլիտան (ընտրանին) (Բիլբերդյան, Փարիզի ակումբները և այլն),
- Մասոնությունը,
- Տրանսնացիոնալ կազմակերպված հանցագործությունը (տրանսնացիոնալ նարկոկարտելներ, միջազգային ահաբեկչական կազմակերպություններ) [4]:

Սակայն, մեր կարծիքով, թվարկած ակտորները լիովին չեն ներկայացնում այն բոլոր միջազգային դերակատարներին, որոնք մեր ժամանակներում էական ազդեցություն ունեն միջպետական հարաբերությունների վրա: Կարծում ենք, որ անհրաժեշտ է դրանց ավելացնել առանձին վերցրած հզոր երկրներին, այլ կերպ ասած՝ գերտերություններին և տարածքային տերություններին, որոնք անկասկած, եղել և մնում են որպես կարևորագույն միջազգային ակտորներ:

Մինևույն ժամանակ, միջազգային և տարածաշրջանային անվտանգության վրա իրենց ուրույն ազդեցությունն են թողնում տեղեկատվական միջոցները, որոնք անշուշտ, ունեն բավականին մեծ ազդեցություն հատկապես հասարակական կարծիքի ձևավորման գործում: Համաշխարհային տեղեկատվական դաշտի և կոմունիկացիաների հզորացմանը զուգընթաց ուժեղանում է միջազգային լրատվամիջոցների ազդեցությունը միջպետական հարաբերությունների վրա: Դա հատկապես նկատելի է դառնում միջպետական հակամարտությունների սրման պահերին, երբ անհրաժեշտ է դառնում նախապատրաստել համաշխարհային հանրության կարծիքը որոշակի գործողություններ «արդարացնելու» համար: Դրա բազմաթիվ օրինակների վկան ենք դարձել վերջին տասնամյակում (Իրաքյան, Վրաց-օսեթական հակամարտության, այսպես կոչված «արաբական գարնան» զարգացումների, Ուկրաինայում 2014 թվականից ծավալված գործողությունների ժամանակ և այլն) [5]:

Մեր ժամանակներում միջպետական հարաբերությունների վրա սկսել են լուրջ ազդեցություն ունենալ նաև միջազգային ոչ կառավարական (ոչ պետական, հասարակական) կազմակերպությունները, որոնք գործում են քաղաքական, քաղաքացիական, մշակութային, սոցիալական և տնտեսական ոլորտներում:

Ուշադրություն դարձնենք այն հանգամանքն, որ վերոնշյալ միջազգային ակտորները կարող են երկակի՝ դրական կամ բացասական ազդեցություն ունենալ միջպետական, նույն է թե՛ միջազգային հարաբերությունների զարգացումների և անվտանգության վիճակի վրա: Դա առաջին հերթին կարելի է բացատրել որպես գլխավոր դերակատարներ հանդիսացող առանձին հզոր երկրների ազգային շահերով, որը, որպես կանոն, ոչ բացահայտ, սակայն նկատելի է բոլոր տեսակի միջպետական հարաբերություններում, հատկապես սուր հակամարտությունների ժամանակ: Այս գործոնը իրապես որոշիչ է, քանի որ բոլոր տեսակի միջազգային կառույցներում և կազմակերպություններում որոշակի պետություններ ունեն ազդեցության լծակներ և կարողանում են այդ ինստիտուտներն օգտագործել իրենց շահերին համապատասխան: Անգամ այնպիսի հեղինակավոր և ազդեցիկ կառույց, ինչպիսին է ՄԱԿ-ը, զերծ չէ դրանից, քանի որ ԱՄՆ-ն և նրա դաշնակիցները, որպես կանոն, կարողանում են անցկացնել այնպիսի բանաձևեր, որոնք բխում են զուտ իրենց շահերից, որոնք կարող են, մեղմ ասած, չհամապատասխանել այն երկրի շահերին, որի նկատմամբ ընդունվել է այդ բանաձևը (օրինակ՝ Իրաքի և Լիբիայի նկատմամբ ընդունված բանաձևերը): Դա բացատրվում է նաև ՄԱԿ-ի կազմակերպչական անկատարությամբ, որի մասին բազմիցս հարցադրումներ են բարձրացրել տարբեր մասնագետներ և առաջարկել բարեփոխումներ: Հարկ է նշել, որ միջազգային կառույցների աշխատանքները շատ դեպքերում չեն գտնվում անհրաժեշտ մակարդակի վրա, քանի որ առանձին պետությունների քաղաքական կամքը չի համընկնում միջազգային հանրության շահերի հետ, ուստի այդ շահերը չեն դառնում համընդհանուր, ինչպես, օրինակ Հարավսլավիայում, Ռուանդայում, Լեռնային Ղարաբաղում, Արաբա-իսրայելական և այլ հակամարտություններում:

Առավել ևս մեծ է այս կամ այն պետությունների ազդեցությունը միջազգային մյուս կառույցների ու կազմակերպությունների վրա, որոնց միջոցով կարողանում են միջամտել ոչ միայն միջպետական հարաբերությունների, այլև ներպետական զարգացումների վրա: Այսպես օրինակ, Ղարաբաղյան հակամարտության խաղաղ լուծման նպատակով ստեղծված ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի երեք համանախագահ պետություններից (ԱՄՆ, Ռուսաստան, Ֆրանսիա) ամեն մեկն իր սեփական շահերն է հետապնդում Հարավային Կովկասում, ինչն, անկասկած, իր ազդեցություն է ունենում այդ տարածքում գտնվող ճանաչված և առայժմ չճանաչված պետությունների հարաբերությունների վրա [6]: Հաս-

կանայի է, որ այնպիսի էթնոքաղաքական միջազգային կազմակերպություններ, ինչպիսիք են Հրեական միջազգային կոնգրեսը, ակնհայտորեն պետք է գործի Իսրայելի, իսկ Սլավոնական ժողովուրդների կոնգրեսը՝ Ռուսաստանի շահերին համապատասխան:

Միջազգային անվտանգության խնդիրներն ուսումնասիրելիս չի կարելի հաշվի չառնել նաև կրոնական գործոնը: Կրոնական կազմակերպությունների ազդեցության ակտիվացումը հատկապես նկատելի է Մերծավոր Արևելքում: Չմանրամասնելով իրադարձությունները՝ նշենք, որ «արաբական գարունը» ակտիվացրել է իսլամական կազմակերպությունների դերակատարությունը տարածաշրջանի պետություններում, որոնք զգալի ազդեցություն են ունենում ոչ միայն ներպետական զարգացումներում, այլև միջպետական հարաբերություններում: Դրա ակնհայտ դրսևորումն է Եգիպտոսի քայլերը Իսրայելա-պաղեստինյան 2012թ. նոյեմբերյան իրադարձությունների ժամանակ, երբ ետ կանչվեց Եգիպտոսի դեսպանը Իսրայելից [7]: Սա խոսում է Եգիպտոսում իշխանության հասած իսլամիստ դեկավարների նոր քաղաքական վարքագծի մասին այդ հակամարտության նկատմամբ:

Դժվար չէ նկատել նաև առանձին երկրների ազդեցությունը միջազգային մյուս կառույցներում և կազմակերպություններում, ուստի միջպետական հարաբերությունների ուսումնասիրության ժամանակ կարևոր նշանակություն է ձեռք բերում բոլոր այն երկրների շահերի բացահայտումը, որոնք ուղղակի կամ թաքնված ազդեցություն կարող են ունենալ այդ հարաբերությունների վրա: Դա հնարավորություն կընձեռնի ավելի ճիշտ գնահատելու կոնկրետ իրավիճակները, կանխատեսելու զարգացումները և ընդունելու սեփական պետության շահերից բխող որոշումներ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Եվրոպական հարևանության քաղաքականությունը (Եվրոպական Միություն-համառոտ ակնարկ և փաստերի ժողովածու), Եր., Անտարես, 2006, էջ 10-62
2. Հիմնական փաստեր Միավորված ազգերի կազմակերպության մասին, Եր., ՄԱԿ, 2002, էջ 72–81
3. Лукашук И.И., Международное право, Общая часть, М., БЕК, 1997. стр. 176.
4. Մանրամասն տես Воронов А.А., Основы национальной безопасности. Научно-практическое пособие, М., Ягуар, 2000, стр. 12–13.
5. Современные международные отношения (Под. ред. Торкунова А.В.), М., РОССПЭН, 1999. стр. 246, Захаров В.А., Арешев А.Г., Семерикова Е.Г., Абхазия и Южная Осетия после признания: Исторический и современный контекст, М., Русская панорама, 2010, стр. 294-312 և ուր.
6. Захаров В.А., Арешев А.Г., Семерикова Е.Г., Абхазия и Южная Осетия после признания: Исторический и современный контекст, М., Русская панорама, 2010, стр.414-433, Трансформация конфликтов и пути установления мира на Южном Кавказе (Под. Ред. Мирумяна К.А.), Ер., 2004, стр. 118 – 123.
7. <http://www.rbc.ru/rbcfreenews/2012/11/15/003504.shtml>

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Միջազգային անվտանգության վրա ազդող մի քանի գործոնների շուրջ
միջպետական հարաբերությունների համատեքստում
Արամ Մանուկյան

Հոդվածում դիտարկվել են միջպետական հարաբերությունների ազդեցությունը միջազգային անվտանգության ձևավորման և ապահովման գործընթացում, վեր են հանվել միջպետական երկկողմանի և բազմակողմանի հարաբերություններում առկա որոշ գործոններ, որոնք առավել մեծ ներգործություն են ունենում ինչպես արդի միջազգային, այնպես էլ տարածաշրջանային անվտանգության բարդ և բազմաբնույթ համակարգի ձևավորման վրա: Ինչպես նաև քննարկվել են միջազգային անվտանգության արդի որոշ սպառնալիքներ, որոնք ևս անմիջական նշանակություն ունեն միջպետական հարաբերությունների և համագործակցության կազմակերպման, միջազգային և տարածաշրջանային անվտանգության ապահովման տեսանկյունից:

Բանալի բառեր` միջազգային անվտանգություն, տարածաշրջանային անվտանգություն, միջպետական հարաբերություններ, միջազգային հարաբերություններ, անվտանգության սպառնալիքներ, միջազգային ակտորներ

РЕЗЮМЕ

О некоторых факторах, влияющих на международную безопасность в контексте
межгосударственных отношений

Арам Манукян

В статье рассматривается влияние межгосударственных отношений на формирование и обеспечение международной безопасности. Автором выявлены некоторые факторы двусторонних и многосторонних межгосударственных отношений, которые имеют наибольшее влияние на формирование как современной международной, так и региональной сложной и многослойной системы безопасности. В то же время были обсуждены некоторые актуальные угрозы международной безопасности, которые также имеют непосредственное влияние на формировании и обеспечении межгосударственных отношений, международной и региональной безопасности.

Ключевые слова: международная безопасность, региональная безопасность, межгосударственные отношения, международные отношения, угроза безопасности, международные акторы

SUMMARY

Some Factors Influencing International Security in
the Context of Inter-State Relations

Aram Manukyan

The article considers the influence of interstate relations on the formation and ensuring the international security. It also reveals some factors of bilateral and multilateral inter-state relations, which have the outmost influence on the formation of both current international and regionally security complex and multi-layered security system. At the same time the article examines some current threats to international security, which also have a direct impact on the formation and insuring of interstate relations, international and regional security.

Keywords: international security, regional security, interstate relations, international relations, security threat, international actors.